ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 01

**<<ԿՄՀՔ-ԳՀԾՁԲ-20/01>> ԾԱԾԿԱԳՐՈՎ <<2020 Թ. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ>> ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

Ք. Հրազդան «5» մարտի 2020 թ.

Հրազդանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ս.Միքայելյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Սահակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2019թ. դեկտեմբերի 20-ին կնքված <<2020 թ. հաշվետու ժամանակաշրջանի համար ներքին աուդիտի ծառայությունների մատուցման <<ԿՄՀՔ-ԳՀԾՁԲ-20/01>> ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.15 կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ով, հետագա համագործակցության համար կողմերը սահմանեցին սույն համաձայնագիրը՝

2. 1.1.1 Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածը փոփոխության չի ենթարկվի /կցված է/ համաձայնագրին/:

3. 1.1.2 Պայմանագրի N 2 «Վճարման ժամանակացույց» հավելվածը սահմանել հետևյալ կարգով /կցված է/ համաձայնագրին:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը՝

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից (յուրաքանչյուրը բաղկացած է երկու թերթից և հավելվածներից), որոնցից մեկ օրինակը հանձնվում է Կատարողին, իսկ մյուս օրինակը՝ Պատվիրատուին:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Հրազդանի համայնքապետարան | <<ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա>> ՓԲԸ |
| ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1, | ք. Երևան, Դ. Անհաղթի 23/6, 5-րդ հարկ |
| վարչական շենք Հրազդանի ՏԳԲ | ՀՎՀՀ 01569792 |
| ՀՎՀՀ 03000453 | Ամերիաբանկ ՓԲԸ |
| ՀՀ 900122001465 | Հ/Հ 1570013745270100 |
| Համայնքի ղեկավար՝ | Տնօրեն՝ |
| ---------------Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ | ---------------Վ.ՍԱՀԱԿՅԱՆ |

*Հավելված N 1*
*« 5 » մարտի 2020թ. կնքված <<ԿՄՀՔ-ԳՀԾՁԲ-20/01>>*
*ծածկագրով համաձայնագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը՝ |
| 1 | 79211150 | 2020 թվականի հաշվետու ժամանակաշրջանի համար ներքին աուդիտի ծառայությունների մատուցում | դրամ | 3 240 000 | 1 | Ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք: | Կողմերի միջև կնքված համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օրվա ընթացքում: |

# Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն  Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր

1. Ներքին աուդիտի ծառայության շրջանակը

Ներքին աուդիտի ծառայությունների մատուցման նպատակով հրավիրված անձը (այսուհետ՝Կատարող) պետք է գնահատի ՀՀ հանրային հատվածի կազմակերպության (այսուհետ՝կազմակերպություն) ներքին աուդիտի միջավայրը՝ ֆինանսական կառավարման և հսկողության հետ կապված գործառույթները, և առաջարկների ներկայացման միջոցով օժանդակի ղեկավարությանը ձեռնարկել միջոցառումներ՝ կազմակերպության նպատակներին հասնելու և դրանում հնարավոր ռիսկերը կառավարելու համար:

Նախկինում կատարած աուդիտորական աշխատանքերի արդյունքները պետք է ընդունվեն ի գիտություն և հաշվի առնվեն հետագա աշխատանքներում:

Կատարողին և վերջինիս կողմից մատուցվող ներքին աուդիտի ծառայության նկատմամբ ներկայացվող ընդհանուր պահանջներ

Ներքին աուդիտի անկախությունը.

ա) Կատարողը պետք է հաշվետու լինի կազմակերպության ղեկավարին (այսուհետ՝ ղեկավար) և ներքին աուդիտի կոմիտեին.

բ) Կատարողը պետք է կատարի ներքին աուդիտի կոմիտեի քարտուղարի պարտականությունները.

գ) Կատարողը չի կարող իրականացնել կազմակերպության կառավարման որևէ գործառույթ, բացի ներքին աուդիտի գործունեության կառավարման գործառույթներից.

դ) Կատարողը պետք է իրականացնի կազմակերպության ներքին աուդիտի միջավայրի ուսումնասիրություն և գնահատում:

2. Ձեռք բերվող ծառայության նկարագիրը.

1) Կատարողը պարտավոր է Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ձեռնարկի ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված բոլոր այն գործողությունների կատարումը այնպիսի ժամկետներում, որպեսզի՝ 2019 թվականն ընգրկող ժամանակահատվածից սկսած մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը ապահովի սույն տեխնիկական բնութագրով և ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված ներքին աուդիտի ծառայությունների մատուցումը:

2) Սույն բաժնի 1-ին կետով սահմանված պարտականության կատարման նպատակով Կատարողը պարտավոր է.

ա) կազմել ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիր, ապահովել դրա կատարումը.

բ) կազմել և ղեկավարի հաստատմանը ներկայացնել ներքին աուդիտի կանոնակարգը.

գ) կազմել ռազմավարական և տարեկան ծրագրերը՝ կազմակերպության ռիսկերի գնահատման, ինչպես նաև ղեկավարի կողմից մատնանշված խնդիրների հիման վրա.

դ) իրականացնել արդյունավետ ներքին աուդիտ՝ գնահատելով ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերի արդյունավետությունը և համապատասխանությունը հետևյալ պայմաններին՝

- Կազմակերպության ղեկավարության կողմից ռիսկերի բացահայտում, գնահատում և կառավարում,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) համապատասխանություն,
- տնտեսող, արդյունավետ և օգտավետ գործառույթներ,
- տեղեկությունների վստահելիություն և ամբողջականություն,
- կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիություն,
- առաջադրանքների կատարում և նպատակների իրագործում:

ե) տրամադրել.

- Հավաստիացում առ այն, որ կազմակերպությունում առկա կառավարչական գործընթացները համապատասխանում են/ չեն համապատասխանում/ մասամբ են համապատասխանում նշանակալի ռիսկերի բացահայտման և դիտարկման նպատակին.
- Հաստատում առ այն, որ ներդրված ներքին հսկողական համակարգերը գործում են/ չեն գործում արդյունավետ կերպով.
- Հավաստիացում առ այն, որ ռիսկերի կառավարման վերաբերյալ հաշվետվողականության գործընթացները հուսալի են/ հուսալի չեն.
- Հաստատում առ այն, որ ղեկավարը կազմակերպության այլ պաշտոնատար անձանցից ստանում է/ չի ստանում/ մասամբ է ստանում պատշաճ որակի և հուսալի տեղեկատվություն.
- առաջարկություններ՝ ուղղված հսկողական համակարգերի և ռիսկերի կառավարման ընթացակարգերի բարելավմանը և հսկողական համակարգերում բացահայտված թերությունների շտկմանը,

գ) կազմել և ղեկավարին ու ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնել ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները.

- Իրականացված աուդիտորական առաջադրանքների արդյունքների վերաբերյալ պարբերական հաշվետվություններ.
- Ներքին աուդիտի գործունեության արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվություն.
- Տարեկան առնվազն մեկ անգամ ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվություն, ներառյալ ներքին գնահատման արդյունքները, միջոցառումների անհրաժեշտ ծրագրերը և դրանց իրականացման արդյունքները:

ե) իրականացնել վերստուգման գործընթաց՝ աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարության կողմից իրականացված՝ աուդիտի արդյունքում բացահայտված թերությունների շտկման գործողությունների համապատասխանությունը, արդյունավետությունը և ժամանակին լինելը գնահատելու նպատակով: Կատարողը պետք է հատուկ ուշադրություն դարձնի այն

գ) ռազմավարական ծրագիրը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ ի գիտություն.

դ) հաջորդող տարվա տարեկան ծրագիրը՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը.

ե) հաշվետվություն՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի 9-րդ հավելվածում ներկայացված 2 րդ ձևով՝ ներքին աուդիտի կանոնակարգի հաստատումից կամ փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում.

զ) ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվություն՝ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը.

է) կազմակերպության կողմից հաստատված ներքին գնահատման ստուգաթերթերը և հարցաշարերը ու դրանցում կատարված փոփոխությունները՝ հաստատումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում.

ը) ներքին գնահատման արդյունքները, միջոցառումների անհրաժեշտ ծրագրերը և դրանց իրականացման արդյունքները՝ տարեկան առնվազն մեկ անգամ, ցանկալի է տարեկան ամփոփ հաշվետվության հետ մեկտեղ:

3. Ծառայության ընդունման և վճարման ժամանակացույցը.

Պայմանագրի կատարումն ընդունելու նպատակով յուրաքանչյուր հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Կատարողը ներկայացնում է հաշվետվություն հաշվետու ժամանակահատվածում մատուցված ծառայության մասին՝ նշելով ծառայություն մատուցողի անունը, ծառայության բնույթը, բովանդակությունը և դրա փաստաթղթավորված արդյունքը, ինչպես նաև իր կողմից հաստատած գրավոր հավաստում, որ ծառայությունը մատուցվել է գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում հրավերով նախատեսված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գնահատման նպատակով ներկայացված մասնագետների կողմից՝ կցելով նաև վերջիններիս կողմից հաստատված ինքնակենսագրությունները:

Վճարումն իրականացվում է պայմանագրով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին՝ հաշվետու ժամանակահատվածի համար ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված աուդիտորական առաջադրանքների կատարման՝ դրանց վերաբերյալ ներկայացված հաշվետվությունների առկայության և Պատվիրատուի կողմից տրված դրական եզրակացության դեպքում (եզրակացությունը ստորագրվում է և հանձնման- ընդունման արձանագրությունը Մատակցին ներկայացվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում):

Սույն տեխնիկական բնութագրի շրջանակում հաշվետու ժամանակահատված է համարվում՝

1) Կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ մինչև 25.12.2020թ.

2) 2020 թվականի հունվարի 1-ից մինչև պայմանագրի գործողության ավարտը յուրաքանչյուր եռամսյակը, ընդ որում չորրորդ եռամսյակի հաշվետվությունները ներկայացվում են մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը, իսկ պայմանագրի գործողության ընթացքում վերջին ժամանակահատվածը ժամկետի լրանալուց 15 աշխատանքային օր առաջ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Հրազդանի համայնքապետարան | <<ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա>> ՓԲԸ |
| ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք Հրազդանի ՏԳԲ | ք. Երևան, Դ. Անհաղթի 23/6, 5-րդ հարկ |
| ՀՎՀՀ 03000453 | ՀՎՀՀ 01569792 |
| ՀՀ 900122001465 | Ամերիաբանկ ՓԲԸ |
| | Հ/Հ 1570013745270100 |
| Համայնքի ղեկավար՝ | Տնօրեն՝ |
| ---------- [illegible] | ----------Վ.ՍԱՀԱԿՅԱՆ |

*Հավելված N 2*
*« 5 » մարտի 2020 թ. կնքված*
*համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79211150 | Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում | - | - | - | - | - | 1 080 000 | 1 080 000 | 1 080 000 | 2 160 000 | 2 160 000 | 2 160 000 | 3 240 000 | 3 240 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հրազդանի համայնքապետարան
ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1,
վարչական շենք Հրազդանի ՏԳԲ
ՀՎՀՀ 03000453
ՀՀ 900122001465

Համայնքի ղեկավար
------------ ...ՂՈՒԿԱՍՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

<<ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա>> ՓԲԸ
ք. Երևան, Դ. Անհաղթի 23/6, 5-րդ հարկ
ՀՎՀՀ 01569792
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570013745270100

Տնօրեն՝
------------ Վ.ՍԱՀԱԿՅԱՆ